

կուտայ, ու աղջիկը իրեն թագուհի կ'ընէ, Ի՞սան ալ իրեն վէզիր կամ փոխարքայ կը դնէ: Ի՞սիկայ բոլոր տէրութեան գործքերը այնչափ աղէկ կը կառավարէ, որ այնպիսի մարդ չընդկաստանի տէրութեան մէջ դեռ չէ երեցած եղեր:

Ի՞սայ անիկայ մեռնելուն պէս՝ տէրութիւնը մեծամեծ խոռվութեանց մէջ ընկաւ, և Շիհանկիր 20 տարիէն աւելի խաղաղութեամբ թագաւորելէն ետքը, տնական կոիւները չորս կողմը առին: Դաշտաւոր թշնամին եղաւ իր տղան որ Խուրբէմ սուլդան կ'ըսուէր, ու ետքը Շիհանշահը ըսուեցաւ. ասիկայ թագաւորել ուզելով, պատերազմ բացաւ հօրը դէմ, որպէս զի աթոռէն վար ձգէ զինքը ու մեռցընէ, ինչպէս որ արդէն իր մեծ եղբայրը սպաններ էր: Խրկար ատեն ու սաստիկ պատերազմներ ընկէն վերջը՝ Շիհանշահ յաղթուեցաւ, ու ինչուան բոլորովին ալ յուսահատելով զջման թուղթ գրեց հօրը. անիկայ ալ ամենայն քաղցրութեամբ ներեց որդւոյն: Ին կոիւներուն մէջ նաև ուրիշ շատ դժուար դիպուածներու մէջ, Շիհանկիրին մեծ օգնութիւն ըրաւ իր արիասիրտ Առուհապահէթ անունով խելացի սպարապետը: Ի՞սայ Շիհանկիր իր տկարութը չձանցաւ անոր արդիւնքը, մանաւանդ թէ իր թագուհւոյն գրգութեանցը մտիկ ընելով՝ ետևէ եղաւ որ զԱռուհապահէթը մեռցընէ. անիկայ ալ այսպիսի ապերախտութեան չդիմանալով՝ թագաւորին վրայ պատերազմի ելաւ, յաղթեց, ու թագաւորն ու թագուհին ալ բռնեց, բայց ետքը երկուքն ալ ազատեց: Այսգուհին նոր ապերախտութեամբ սկսաւ գրգուել զթագաւորն որ սպաննէ ըզ-Առուհապահէթը. բայց Շիհանկիր մըտիկ չըրաւ, և Առուհապահէթին իմացուց ծածուկ գլխուն գալիքը. անիկայ ալ ձգեց փախաւ, ու Շիհանկիրին մէկալ որդւոցը քով գնաց:

Ի՞սապիսի դիպուածներ ու շատնե-

ղութիւններ քաշելէն վերջը մեռաւ Շիհանկիրը 1628<sup>ին</sup>: Իսոր ժամանակը Ալը Ուովմաս Ուոէ ըսուած անդղիացին ճամբորդութք եկաւ Շիհանդկաստանի մայրաքաղաքը, և թագաւորէն ազատութիւններ ու արտօնութիւններ, արեւելեան հնդկաստանի ընկերութեանը համար ալ վաճառականութեան հրամաններ առաւ: Ո՞վ կարծէր թէ ան վաճառականները՝ որ եկեր թագաւորէն հրաման կը խնդրէին առուտուր ընելուիր ընդարձակ տէրութեանը մէջ, ատենով գրեթէ բոլոր հնդկաստանին տէրը պիտի ըլլան՝ ինչպէս են այսօրուան օրս:

### Ա. Զ. Գ. Ա. Ց. Տ. Կ. Ս.

Հանձու և բարձր հայուսունէաց:

ՈՐՈՅ հրաւիրանաւ հայրենեան ոգւոյ իբրև ՚ի սրբազն և ՚ի սիրալիր պարսս փութացեալ խմբիք ՚ի սրահս Վարժարանիս Ճոխացելոյ յոտին ձերում, ո աստուածընտիր Վերագիտողը և Հարքի իմ պատկառելիք, և գուք գումարք Ժրաշան երիտասարդաց և մանկութեան, արամեան գրոհիս խայրիք պատուականք, զինչ ինչ արդեօք հնարից ից ինձ կէս տեսութեն կարգել այսօր, բայց եթէ զայն՝ զոր զուարթագին ակնարկութեամբ ազգէք յիս, և յոր անդուլ, և մանաւանդ ՚ի ժամուս յայսմիկ, պարապին ուխտը ազնուական սրտիցդ ձերոց: Ոչ գոյր արդարու ձեզ պահանջել, և ինձ հատուցանել հարկ ըղձալի և պանծ ալի, քան ըզմիշտակս հայրենեաց, յոր միաձայն յորդորեն զիս և ընդարձոյս յօժարութիւն հոգւոյս, և պարտք խրախուսանաց համբակացս և ազգիս համօրէն:

Վասն որոյ ՚ի բազմապատիկ բարեմասնութենէ Հայաստանեայց՝ զաղնուագումնէն և քան զբնաւս պանծալոյն բուռն հարեալ աստէն, զառաւելութեց ասեմ հայկական հանձարոյ և զբարուց, ջանեդից ցուցանել զհանդէս զըրութեան նորին որ ՚ի մտաւոր և ՚ի ձեռնարուեստ յաջողութիւն, և որ ՚ի քաղզպավարութեան առանձինն և աշխարհօրէն:

Առ այսպիսի գործ կարեւոր ես ինձէն վկայեմ աստղատին զնուաստութ բանիցս հիւսուածոյ, և ըզնուազութիւն հահաւոր հմտուեն. ասկայն վստահ եմ՚ի սիրան որ բերանովս այսու բարբառիցի յազգասէր և յեղբայրասէր լսելիս. ՚ի սիրան՝ որ երախտագէտ և հաւասար սիրող հայրենեաց և ճըւ-

1. Ռաբույելուն Վարժարանին բարձրէաւ գնեսնէաւ ապէն զարցուուծ ապասիրուիս ճառաց, որ յիշեցին օրդիրի 319 երես, իւրիւն հաս երիս, օրուածով:

մարտութեան վկայի յանձին գիտակցութենէ . և յունկնդիրսն՝ որոց անուն եեթ և արդիմք և քաշակորով դատաստան՝ գիտեն ըստ արժանեաց գովել զգովելին , և զայլախօսաց կամ զաշաղիոտաց ազդիս կարկեցուցանել զբերանս : Աներիիւղ արդ յինոց թերութեանց , մանաւանդ թէ վլստահ նովին իսկ թերութեամբք ասպարեզ ընդարձակ բանալ իմաստութեան և ներողամոռութեան վեմական կահառոյս , մտանեմ ի հանդէս , փափակելով յամենայնի զանոս իմ քան թէ զբանս , և զայրենիս քան թէ զիս գովելի յանդիման կացուցանել :

## Ա .

ԵՐԿՈՒՔ այսոքիկ են անժխտելի և նախանձելի ձիք երկնաշնորհք տանս չայոց , որ և ամենայն իմաստամբը մոտաց սիրալիք երկին . երիցութիւն ժամանակաւ ՚ի բազում իրս , և հզօր զօրութիւն յառաջադէմ ընթանալոյ ըստ իւրումն չափոյ յասպարեզ՝ զոր երաց տէր առաջի մարդկայինս հանձարոյ : Առաջնովն անզուգական պարծանք են մեր ՚ի վերայ այլոց ազգաց . սակայն եթէ պարծել ինչ օրէն ից ՚ի վերայ ձրիատուր պարգևաց վերնախնամ տեսչութեանն . որպիսի ինչ լեզուին մերոյ է վաղեմի հնութիւն , և չայլաստան երկրին առաջին լնել հանդիսարան և կրօնից և ընտանեկան և քաղաքական կենաց , և արուեստուոց համաշխարհական , և կրկնակի դարձ ազգիս մերոյ ՚ի հաւաստ քրիստոսի առ Արդարու և Տրդատաւ : Իսկ երկրոդն , թէպէս և այն Աստուծոյ պարգև , այլ ջանիւ ազգիս բացափայլեալ և մեղ գործէ պարծանս և Աստուծոյ փառու:

Յամենայն իսկ յերևելի հնարս Ճարտարութեան մտաց կամ ձեռաց՝ որով ճոխանայցէ մարդ , գտանեմ ես և զչայս բաւական և կամ կարող , յառաջադէմ և կամ գերազանցեալ իրրու սեպհական իմն ունելով շնորհս յայնմ մասին : Եւ եթէ ՚ի գերագունին կամիցիմք սկիզբն առնել տեսութէ , ՚ի մտաւորական ասեմ իմաստից , երկին ինձ չայը և ՚ի սէր և ՚ի բարգաւաւանս ուսմանց բարենշան դոյլ յազինս ամենայն :

Բայց մինչք յառաջ խաղացեալ ՚ի կարգ բանիս , հարկ անհրաժեշտ ՚ի վերայ կայ տապալել զկարծեցեալ արգել լինչ բանիցս առաջարկելոց : Քանզի զբազումն օտարս տեսանեմ ՚ի կարծեաց ուսումնասիրութեան չայոց , վկայութիւն մեծ ունելով զիսորենեան ծերունոյն բոլոք զանիմաստասէր բարուց նախնեաց ազգին : Այլ աներկիւղ կացուցանեն զիս ՚ի վճռոյ անտի արդիմք իրայն . և նախ այն իսկ , զի խորենացին է կշտամբող , այր յայն սահման իմաստութեան վերձեմեալ ուստի յոլով անգամ որք անդր թեապարել բաւեցին ցածունս յոյժ զիներքոյ կացեալսն նշարէին . երկրորդ անդամ , զի լիշխանսն յաւէտ ձգէ նազարամբանսն . և երրորդ , յայնժամ բողոք բառնայ՝ երբ յարբունի դիւանս ազգին ոչ գտեալ ոչով պատմութիւն , առ արտաքինսն ստիպի գեգերել :

Այլ ոչ ահա և դիւանացդ նուազութիւն՝ անուսումնութեան ցոյցս , ասեն , ընծայէ : — Արդարու ոչ . քանզի զայն նախ աստանօր հարկ է ածել զմտաւ , զի որպէս սակաւ ինչ գրեան հասին առ

մեզ ՚ի դարէ անտի խորենացւոյն , և առ նա ինքն անշուշտ սակաւք ՚ի բազմաց յառաջնոցն ժամանեցին յերեսաց բազմապատիկ անցից աշխարհին : Խակ յուտարցուք զնորին խակ զառն մեծի զանտարակոյս վկայութիւն յիմ կողմն անդէն առընթեր կշտամբանացն եգեւալ , յասելն զիրաւանց և զառ անձնականութեանց իշխանաց իշխանաց , թէ այս այժմ առ մեզ գտանին անեբաւ զրուցաց մատենանք ՚ : Եւ միթէ զի գատաստանական եին գրութիւնն արտաքը անշինակալ գարութեանց թուիցին ումեք . և ո՞ր ազգ անձաշակ գարութեանց այդպէս յոլովութեամբ իրաւաբանութիւնս ունիցի : Սատոգիւ արդ ինձ այս թուի , զի ոչ այնպէս ընդ անուսումնութիւնն ինչ , որպէս ընդ այն սրտնէր խորենացի զի չեղև փոյթ թագաւորաց մերոց խմբարհի առնել զվելապս անցից աշխարհին , որպէս Աղեքսանդրին արար և Պաղոմէսու և կամ մերս Վաղարշակ զինի , Քանզի գիււանական մատենից ուրոյն գիւտք էին ՚ կողմանս կողմանս աշխարհին , յորոց և ինքն և որ յառաջ քան զնա գրից օժանդակեցան . բայց գիւնապետքն մեծաւ զրուցուք պահէին զնոսին , որպէս և իւրաքանչափն մեծաւ զրուցուք պահէին զնոսին , որպէս և իւրաքանչափն մեր չենոր Գալակայ յասելն . «Որպէս զայլ աեղեացն չեմ ինչ գրեալ , ոյնինպէս ՚ և զիմն չիշխնէ ոք գրել քանզի թագաւորաց ժամանակաբից ենն ՚ : և յայս սակս իսկ թուի ինձ թէ արգել նման Լուսաւորիչն մեր չմիսել ՚ի ճառու թագաւորացն չայոց : Դարձեալ եթէ սոյն Զենոր և Յոհան Մամիկոնեան յիշեն զգիրն Մամիկոնէից պատմութեան , երսի և այլոց տոհմից ունել առանձին գիււանս : Եւ գարձեալ , թէպէտ և սակաւ ինչ էին գիււանք ազգիս , զինչ աւելի էր օտարացն . զիր ուրութէ ՚ի Յունաց մինչեւ ցԵրորդու անկեալ էր ՚ի սիրտ՝ գրել զբազմագիմի անցս աշխարհին . իսկ չուվմայեցիք ՚ Հին ոչ վիպասան ունին և ոչ պատմագիր ՚ որպէս Եւսեբիոս ասէ :

Ստուանին գարձեալ մերքն ՚ի նմին իմաստնոյ իրքն անսիրուց երդարանաց բանաւորաց . զոր թէ ոք կարծեսցէ պարզապէս սասցեալ , ապա և ամենին անձաշակս ուսմանց կարէ ասել զչայս : Իսկ եթէ խորենացին հոմերականս պահանջից բանահիւսութիւնս , այլ ինքնին ոչ : Սակայն զազցմ մեր ոչ միայն քաջածանօթ ախորժակին իւր արդարէ տարգարացացնէ ՚ի կարծեցեալ բասրանացն , այլ և ինքնին իսկ վիպագիրն : Զենչ պահածալի վկայութիւնն զերգաբանութեանց մերոցնքն զնողոմակութորացն կայցէ , որ ՚ի ճառել անդ զշնակաւում աւանդութեանց քամիսութերեայ , յաւելոց ՚ի բանան . «Բայց առաւել յաճախագոյն ՚ հինքն Արամազնեայց , ասէ , ՚ի նուագու բամբուան ՚ և յերգս ցցոց և պարուց զայսսոսիկ ասեն յիշեն տակօք ՚ : Ապա ուրեմն անգստին յաւուրցն Նոյի իջեալ հանգուցեալ կային երկնաձմեն ՚ . բաժիշտք ՚ի գարեանդս Մասեաց վառել զոյիս Հայկազանն ՚ի նուագու տաղլից : Ոչ զնոյն վկայիցէն և առակաւոր բանին որ զշնակաւում աւանդութեանց քամիսութերեայ , որք մօտ ՚ի սկիզբն պատմութիւնն աշխարհին կան . զնոյն և այլքն ըստ ընթացից ժամանակին՝ որ զժիւրանայ , զվահագնէ , զԱրտաշակէ , զԱրտաշակէ , զայս զշրդատայ և զայլոց , որպէս յիշեն խորենացին , Ագաթանգեղոս , և Մագիստրոս . և բուզանդ յաւելու ասել վիշխանացն չայոց , զվապասանու . ՚Զիւրեանաց երգս առասպելեաց զվապասանու .

» Թիւնս սիրեցին 'ի փոյթ կրթութեան, և 'ի նոյն  
» հանապազորդեալք » :

Վեպասանութիւն, տաղբ գիւցազնականք, աս-  
տեղաց գիտութիւնք և բնազանցականք, այսոքին  
հաւասար պարապմունք էին մերոցն նախնեաց,  
թէպէտ յետինքս քրմաց սեպհականեալք . յորոց  
կարծեմ առեալ և Պղատոնի զվէպս չերայ հայ-  
կազնոյ՝ որ ծանօթս տայր զանտի աշխարհէն . քանզի  
յատակութիւն նախնի ժամանակաց և յիշատակաց  
մերոյ աշխարհին՝ աստուածայնոց յաւէտ տեն-  
չակս յարդարեցին զմիսս ազգին, և վեհց իմաս-  
տից :

Բայց զբազմազան գալրութեանց ախորժակս  
արդարն Արշակունիքն մուծին 'ի մեզ : Ազգար-  
շակ վերականգնող գահուն հայկազնոց՝ առաջին  
յարուցիչ էկաց և ուսմանց : Որդիկ նորին եւելս  
իմն զիրեցօք առնելով ընդ յունական գերութեն  
ածին 'ի հայս և զմեհեանս և զմատեանս նոցա, և  
անդէն սկզբնաւորէր հրաշալի պատահումն 'ի վե-  
րայ գալրութեան ազգիս՝ որ ցարդ և 'ի սպառ-  
տեսաց . քանզի հայն որ 'ի վերին երեսս կար-  
ծիւր մի 'ի թանձրամիտ բարբարոսաց 'ի խորս Ա-  
սիոյ սահմանեալ, յանկարծ ուրեմն հելլեն հան-  
ձարոյ և լեզուի ընտելացեալ, զնորին գաշնակա-  
ւոր հնչումն հիմականչ իմն արուեստիւ առեալ  
յերիւրէր յաւարոտնն իւր բարբառ . և հնգիւք  
հարիւրովք ամաց յառաջադցն ընդ յալթողա-  
փայլ դրօշուք Արտաշիսեանց և Տիգրանանց ծա-  
գէր արշալոյ գարուն Գրիգորի և Մեսրոպայ :  
Տիգրան քաջակիրթն 'ի հրահանգս իւրոյ պա-  
տույն, և Կղէոպատրա արժանին նմա կին, ոչ  
լոկ բազմաց վլարանդի հելլեն իմաստափրաց  
ասպնջականք լինէին, այլ և թատր յունական  
կարգեցին 'ի մեծն Տիգրանակերտ, ըստ օտարացն  
իսկ վիզելոյ . զի որպէս զինի լատինականն կամ  
առ մեզ գաղփացին՝ նոյնպէս ծանօթ էր յոյնն  
մերոց արքունեաց : Ի նմին ժամանակի և Ղու-  
կուղոս զջիրանիոս, որոյ անուն զազդ իւր ցու-  
ցանէ, ուղղիչ կարգէր մատենադարանին իւրում՝  
զոր կանգնեաց գրենովն զորս 'ի հայոց և 'ի Պոն-  
տոսէ թափեալ էր : Արտաւազգն այն ոչ միայն 'ի  
բարձս կոչնոց, այլ և 'ի ժատարերգութիւնս զրու-  
նոյր, և զիւր ինքնագիր ողբերգութիւնս, զճառս և  
զվեպասանութիւնս թողոյր յընթերցումն Պղու-  
տարբեայ և Ապահիանու : Արգար զբազում գիււա-  
նաց մատեանս յըգեսիս խմբէր . ուստի գարձեալ  
բազումինչ 'ի ձեռս հոռոմայեցւոց անկաւ առ Ե-  
րուանդաւ . իսկ Արտաշէս որպէս այլովն ամենայ-  
նիւ՝ և մակացութեանց անշուշտ եղեւ յազգին  
բարդաւաճող :

Առ սոքօք առաւել աճէին մեհենական մա-  
տեանք : Աղաթանգեղլ յիշ ուրէք մլթին բանիւք,  
«Յերազնոյն զդիւան գրքի Որմզցի ուսման Շար-  
տարութեան մեհեան » . ուր որպէս ինձ թուի՝  
աշակերտէին յարուեստս և 'ի գալրութիւնս քըր-  
մացն : Ցիշէ նաև զԱրտենակալ գալիրս նշանագիրս,  
որք զբանս Գրիգորի և զէս ուիսիմեանց համառօ-  
տիւ հասուցանէին առ արքայ, որ միօրինակ ցու-  
ցանէ զուսմանց և զբազականութեան զարդաց-  
մունս : Իսկ ինքն Ցրդատ 'ի մանկութենէ վարժեալ  
իմաստութեամբ Ցունաց և Հոռոմոց, և առաւե-  
լեալ փիլիսոփայականաւոն, յորժամ աշակից եղեւ  
Գրիգորի 'ի հառագայթէլ զըսս աւետարանին,

Ճանապարհ նոր երաց 'ի հանգէս մակացութեց :  
Յայտնի քարոզեցաւ յայնժամ 'և զօրութիւն հան-  
ձարոյ ազգիս, երբ 'ի սուղ ժամանակի գիցն իրն-  
կարկուք բաւականք գտան առ աստիճան եպիս-  
կոպոսութեան . գալրոցք ասորի և յոյն գալրութեց  
ցան հայկեան համբակօք, այլ ոչ շատացան զու-  
սումնամիրութեան նոցա հարկանելզիմափատ, որք  
«Բազում թոշակօք և հեռագնաց Ճանապարհօք և  
«բազմաժամանակեայ գեգերմամբ » գնային յու-  
սումնի հոչակաւորս յիմաստուն քաղսկբաց : Առ  
այնքան բրտնաջան վաստակս նոցին թուէր անփշըթ  
իմն երևել երկնից՝ եթէ ոչ անակնկալ օրինակաւ  
շնորհէր նոցա զհնարս գիւրագոյն յաջողելոյ «ի  
գալրութիւնս, տալով զնենա իւր 'ի գրիչ Մեսրո-  
պայ, ստեղծուլ և նուլ զկարօտութիւն հայգրոշմ  
սեպհական տառից :

Ա. Ա. թաթ ձեռինն որ 'ի խորհրդարան Մեսրո-  
պայ գծեաց զտառսն կենդանիս, նոյն և 'ի սիրտ  
բոլորումն հայաստանեաց խրախոյս գրեաց իմաս-  
տութեան . քանզի Ճիգն և յաջողուած հինգերոր-  
դի գարուն 'ի վեր քան զնանս երևի : Ի մի տենչառ  
հասարակ վառեալ բորբդին թագաւորն և հայ-  
րապեան և ժողովրդականք համօրէն . Ասհակ և  
Եղնիկ և որք ըստ նոցանէ, պանչելի թարգմանու-  
թեամբն փառս նորս և անկարծելիս յաւելուն  
յաստուածեղէն մատեանն, որում անհնար էր  
այլուստ ինչ փառս ընդունել 'ի գալրութեան մա-  
սին : Անիսոնջ պարբ մերոց թարգմանցաց իբրև ըն-  
չափաց նաւուց գումարտականք պացեալք յԱթէնս  
և 'ի հոռվմ, 'ի Բիւզանդիոն և յԱղեքսանդրիա,  
յաշարհէն Սիւնեաց ցկեսարիս, յԵգեսիոյ մին-  
չե ցԵրուսաղէմ, դառնան ակազմունք և ափուն  
զցանձս իւրեանց 'ի Սամոստիս և 'ի Փայտակարան,  
'ի Գողթն և 'ի Տաշիր, 'ի Ըստագումն և յամենայն  
հայաստան, և «Հզօր գողով, որպէս ասէ Մա-  
գիստրոս, մերոց թարգմանցաց ամենայն լեզուաց  
և իմաստութեանց », ընդ վարդապետաց իւրեանց  
«Զամենայն ժամանակս կենաց իւրեանց յընթեր-  
ուցուածն գրոց ծախէին հարքն զոիւ և զգիշէր,  
ու և նովիմբ ծաղկեալք և շահաւետեալք օրինակ  
» բարեաց ուսումնաասէր առընթերակայից լինէինն .  
որպէս կորիւն տսէ :

Ի մեծէն Գրիգորէ ցՄիթեար մեծ, (արք՝ թէ  
ոչ խարիմ՝ երկեակ հզօր զարթուցելք ազգիս  
հանձարոյ,) և ցաւուրս մեր զայս վեշտասան գար,  
գետ իմաստութեան՝ թէպէտ ուրէք յորդ և ու-  
րեք նուազեալ՝ անընդհատ իջանէ 'ի Մասեաց . և  
'ի ծովածուփի խոռոշութիւնս անդ աշխարհին՝ գը-  
տանէ ծոցս խաղաղականս զմենաստանն զոր յա-  
մենայն դարս և առ ամենայն աղինս ասպնջա-  
կան ընտրեցին անդրազ գիտութիւնք . հապրատ  
և Սանահին, Սևան և Աղթամար, Նարեկ և Կաշան,  
Սիս և Կծմիածին և իմս սուրբ Ղազար, աւանդա-  
պահէր առ 'ի նախնեաց մթերելոց գանձուցն . որ-  
պարանք յերից հարից բարդոց ամաց հետէ հաստա-  
տեալք յազգիս, թէպէտ և 'ի տար աշխարհս .  
վարժարանք վերականգնեալք յազգասիրաց, որ-  
պէս աներկւան պահապանք են ուսումնաասէր  
երկոց ազգիս, նոյն և ջանիցն վկայք . որում միա-  
բանին և աւաղելի իմն վկայութեամբ՝ հուր և սուր  
և ծովք և գետք, որ կլեալ խորասոյզ արարին ըզ-  
հարուստ գիււանս ձեռնադիր տառից, թող զորս  
ժամանակին ժլսաւ լուռթեամբ ծախեաց 'ի մե-

Նարանս մոռացեալս . զորս եթէ Հնար ինչ էր ՚ի  
մի վայր կուտել , ունէաք արդեօք ՚ի տեսիլ համօ-  
րէն ազգաց և աշխարհաց կառուցանել զկոթող  
ուսումնասիրութեան ազգիս : Վասն որոյ թողեալ  
արդ զերկարաձիգ զայս տեսութիւն , յառեսցուք  
զակն ՚ի քնին սեպհականագոյն ախորժակաց ազ-  
գիս ՚ի բազմապատիկ մասունս հանձարոյ :

Ի հոմերական աշխայժմ ևս ձգտի թևապար հան-  
ձարն հայկական, թերևս ոչ այնչափ բնածին ու-  
նելով զոգին զայն՝ որպէս արարացին, որչափ յա-  
ռաւել զօրութենէ մտացն : Բայց զմի զոք ՚ի մե-  
րոցն հրեշտակային մրցող քնարաց, զհսկողն Նա-  
րեկայ, ոչ վեհերիմ ընդ առաջինսն դասել քեր-  
թողաց աշխարհի, որ առ նոյն ինքն նպատակն եր-  
գոց առ Աստուած գիտաց այնպէս բարձր խոյա-  
նալ՝ որպէս և միրս իւր փրկարքորդը : Բայց ՚ի  
Ճարուարիսութեան թուի ինձ եթէ քաջ ՚ի բաց  
քան զբազումն վեհագոյնք իցեն մերքն . և զոյն ՚ի  
սկզբանէ հաւասարն Սիսակն մեր կորովաբան, Ա-  
նուշաւանն շատահանձար յիր և ՚ի բան, Տիգրան և  
Արտաւազդ և Աբգար և Տիրիթ՝ որ գեղաբանութիւն  
զինքնակալաց Հռովմայ զսիրսու գերեին . և Կերսի-  
սեանք և Գրիգորեանք, Սահակ և Մեսրոպ և Գիւտո-  
որք զիայսերս Յունաց և զարքայս Պարսից և զմո-  
գեանն յաաշուկը ըմբռնէին : Դաւիթն այն զԱմէէնս  
պարտէր հայահանձար և յունախօս լեզուաւն . և որ  
յառաջ քան զցիւտ գրոյն երթեալքն անդր ման-  
կունք զՑոյնս և զԱմորիս՚ի պայքարսոբանից ՚ի տագ-  
նապի կացուցանէին . ընդ որս և Պարոյր ոմն կամ  
Պրոյերեսիոս՝ որում իսոնարհէր և Թագուհին տիե-  
զերաց Հռոմ թագաւորին պերճախօսաց ՚ կանգ-  
նել արձան՝ Կիկերոնի հանգիստապատիւ : Թողից  
յիշել և զերդողն մեծ և զնորին եղբայր զՄամ-  
բրէ, զԱղողոմն և զՄամատաէրն, զԸնորհալինն և  
զհրացայտ լեզուն Լամբրոնինեան, և զարքայն Գա-  
գիկ և որ ՚ի սուրբն Սովի Նատէր ընդ ամենայն վար  
՚ գապեատն Հռոմոց . . . որոյ հիանային ընդ կո-  
ւ բովութիւն բանիցն ՚, և զայրան :

Ի Ճաշկակս գեղեցիկ դպրութեց, յորում քաջեց  
բեակի ցուցանի նրբութիւն հանձարոյ, ոչինչ  
յետնեալս քան զԵլլադաշխն վկայէ ԱԷն-Մար-  
թէն գաղղիացի զմերսն՝ յասել անո. «Չասեմ ա-  
» Ելլի ինչ, եթէ զխորենացին, վշովէն և զՂազար,  
» մարթէլլ ասիցեմ հաւասար ընթեռնուու Երոդո-  
» տի, Թուեկիդիքեայ և Քանենոփոնի : Բայց զի՞ մի-  
մի ի քնին առնումք. ակն արկէք միանդամ ի դի-  
ւանս հայոց, և միօրինակ յառաջադէմն գտշիք  
զՎիպագիրսն և զաշխարհագիրս, զքերականս և  
զմեկնիչս, զտումարագէտս և զբժիշխս, այլովքն  
հանդերձ : Եւ եթէ գերազանցելոյ հայկական  
հանձարոյ անժխտելի ևս կամիցիմք վկայութիւն,  
աւասիկ մեզ մանկատին աշակերտեալ ընդ օտարազ-  
նեից, և յաղթող նոցին հանդիսացեալ բազում  
անդամ ի Լեհս, ի Ռուսս, ի Գերմանիա, և ի Կա-  
րուածս Անդինոյ և Հյուսնատայ և այլուր :

Թողեալ զդագարս բարձրաձեմ ուսմանց , իջ-  
ցուք և 'ի քնին ազատական և գործաւոր արուես-  
տից : Հյայստան առաջին արուեստանոց և թան-  
գարան եղեալ աշխարհի , անդ Զրուանք և Զրա-  
գաշտք հնարեին զարուեստա իւրեանց . անդ յառաջ  
իսկ քան զամենայն մարդ՝ ճարտարապետն ամե-  
նայնի Աստուած ուսոյց զերկրագործութի , որ յա-  
ւուրց անտի և 'ի դրանց եղեմայ՝ լամենայն կող

մանս աշխարհին ծաւալեալ մինչեւ ցայսօր կարի  
բարգաւաճ երևի: Վկայէ Վլուտարքոս վասն ժա-  
մանակաց Ագուտարդայ, և այլք վասն որ առ Հռո-  
մայեցւոց մարտիւն, և զյուրենացւոյն զլյուտաշխակ  
ամենէքին դիտեմք, զի մշակութիւն և շինութիւն  
կալեալ էին զերեսս ամենայն երկրին Հայոց:  
Խաշնագարմանութիւն, և այդեւործութիւնը զուարթ  
արար դինեան հանդերձ՝ ի Հայս ի յայս եկին:  
Ճարտարապետութիւն անդ ծնեալ և արտաքոյ զար-  
գացեալ, և առ Ծամիրամատ անդրէն ՚ի նոյն մու-  
ծեալ՝ բարգաւաճեաց ՚ի Տայս և ՚ի Կորդուս: Ի մի  
ջին գարուն և ընճայեաց մեզ Պալլագիոն զջըր-  
գատ և զՄանուել, և ցայսօր իսկ ոչ անընտել է  
արուեստն մերոց Ճարտարաց:

Զ թի՞նչ ասացից և զայնմարուեատէ, եթէ արուեաս  
իսկ արժան իցէ կոչել զայն, զերկնախօսիկն երա-  
ժշուութի, որուամէ յառաջքան զջրհեղեղն ետուն  
արձագանք հովիտք և ըլուրք Աւլորատայ. որ և  
յապայմն սիրելի պարապումն եղև իշխանաց և ծո-  
ղովրդեան մերոյ, որպէս ՚ի բազումբանից մեր և  
արտաքին վիպաղդրաց երեխ. և իշխանաց և հայրա-  
պետական գասուն, որպէս մեծին Սահակայ, Սո-  
ղոմոնի և թէոդորի. և կանանց անգամ, որպէս  
առաքինւոյն Սահակադխոտյ՝ որ «Ի ներքոյ վա-  
րագուրին նստեալ ուսուցանէր» որպէս վրօպա-  
ծածուկ մի մուտայ : Զ ձայն Հայկական լարից  
նուագաց լոււան և քրիստոնախուումբ զօրացն բա-  
նակք առ սրբովիլ ոդովիկեաւ զինուորեալք ՚ի տաղ-  
տուկս տապայեց դաշտաց արեւելից, և սիրացան  
ընդ Ճարտար Թրթիռս մատոնցն և ընդ քաջուրը  
երգան, որք որպէս զիքարապից հեշտալուրք էին  
նոցա, ասէ Ժոկնութի :

Ճարտարութիւն մատանց՝ ոչինչ նուազ քան  
զմուաւորն հանճարոյ յաջողուած տեսսանի՛ մերսն:  
Բացցի՞ն ինձ աստանօր, որպէս երբեմն Գերփոր-  
թերի, խորհրդաւոր աւերակը Ծիրակայ, և աեւ-  
ցուք զվիրալին Անի նուրբ նկարուք և քանդակիք  
և դրուագօք պճնեալ զարդարեալ, զորս և ՚ի քար-  
տինի ուրուագրել անբաւական իցէ ձեռն ճար-  
տարի, ըստ վկայութեան նորին ճանապարհադրի:  
Իցէ՞ ինչ թէ յիշեցից աստանօր և զզարմանալին  
զայն պարմանի... որ առաջի աշաց մերոց յապուշ  
կրթէ զլէնեստիկ և զնէապօլիս, զֆարեզ զ զլու-  
տոն, զշում և զՄարիտ, զի՛ուսաստան և զա-  
մենայն իսկ զլէրոպէ, յորժամ յանձուկ պատու-  
ոին մողական իմն և կամաննիւլծ վրձնաւ այնպէս  
Հցգրիտ և զարմանալի զդիմակս ծովուց և զերկնից  
հանէ ՚ի նկար, մինչև մեծու և գեղեցիկս ըստ իսկե-  
քան զնախատիպսն երևեցուցանել:

Ա. Ա. Հարտագինոց անտի արժան է լսել բան վ  
հարտարութեան հայ ձեռագործաց . զոր ոչ միայն  
քան զայլըց արեւելեայց վերադաս առնեն , այլև  
քան զեւրոպացւոցն , այնու զի վերջացեալք ՚ի նո-  
ցին բազմապատիկ օժանդակ գործեաց՝ առ ձեռն  
սակաւապէտ անօթովք իւրեանց և մատանց ճար-  
տարութեամբ վճարեն գործա գժուարինն : Գրէ  
ոմն ՚ի նոցանէ . « Հայք ցրուեալ ընդ հանօրէն Ա.  
» միա՞ խնամով տածեն զարուեասո . նորա են որ  
» գործեն զերկաթ և զպղինձ , և վաստակին ՚ի բօփա,  
» և սատարք լինին վաճառականութեամբ մեծի  
» մասին Ասիոյ . ՚ի ձեռն նոցա ոսկի և մետաքս և  
» ակունք պատուականք , ընափել ընդույն Մարաց , և  
» գազային , և արմաւ , և զորեան Պարսկաստանի

" և գինին Շիրազու , և թաղիք , և կապերտք և  
" քաշմիք սփոխն ընդ աշխարհ " : Եւ այլ ոն յա-  
ւելու ասել . «Հայք գիտեն յամենայնէ օգուտ  
» հայթհայթել , ևս և յայնց՝ զորոց Տաճիկը ան-  
» փոյթք են , Յոյնք և Հրեայք անտեսողք » : Եւ  
այլք դարձեալ միաբանին կոչել զհայս Զուիցե-  
րեայս արևելից , ժիրս և գործնս , խաղաղասէրս  
և բարեկարգս , մանրահաջիւս և շահախնդիրս : Եւ  
թուփ իմն այնպէս , թէ Ասիա ճոխութեամբ առ  
ամենեսին մատակարարեալ զբերս իւր՝ 'ի հայկա-  
կան մատանց կամիցի նիւթել նոցա տիպս վայե-  
լուց : Եւ եթէ օտարը զայսպիսիս խօսիցին , ես  
ոչ խղձեմ ասել , զի թէ հայ մարդ չկայր յԱսիա ,  
աշխարհն այն այսօր ոչ ինչ առաւելցոր քան զԱփ-  
րիկ :

Ընդ Ճարտարութեան և 'ի մեծագործութիւն  
ձգէր զհայս հանձար նոցա մեծ : Նշխարբ նախնոյն  
հայատանին զերծեալք 'ի ժանեաց ժամանակին՝  
անջինջ արձանիք են և մեծութեան և քաջարուեստ  
հմտութեան շնորհացն . օրինակ իմն քաղաքն հաս-  
տակառոցց որ զՊամիրամայ և զՎանայ կրէ զա-  
նուանս , և որ առ նովլաւ ձեռագործ ըլուրն 'ի  
զբուարանս թագաւորաց , գեղեցիկ հրապարակը  
և բարձրաւանդակ տեղիք Աշխատայ , և ձեռա-  
գործն տքնարան լուսաւորչն՝ ահեղ վիրապն Ար-  
տաշատու . ափոյեանն բարելոնի դաստակերտ գո-  
ռուողին Տիգրանայ , որ պատուարս ունէր բաւական  
'ի ձիբնթաց , ձեռափոր աղբերս , բազմակոյտ  
դարպասս և ճոխութիւն անչափ , և բնակութիւն  
երեսուն բիւրուց Յունաց , թող զբնիկն . շէնք Ե-  
րուանդայ , վիմափոր ջրհորքն յապառածի հա-  
տեալք , սանդիխաւոր պարիսպքն , Երկաթի աստի-  
ճանիքն և դրունք . ոււռանց անտեփփտալք գերեզ-  
ման Սանատրկոյ . Գառնին զարդարեալ հոյակապ  
մահարձանօք . իշխանաց բազմաց շբեղաշուք ապա-  
րանք . յաւերժայիշատակն Անի՝ բիւրովք պալա-  
տանց և հազարովք տաճարաց . ըստ նմին և Գագ-  
կայ կերտուածք , զբուարանիքն ծովափնեայք , քա-  
րակարկառ ամբարտակն 'ի վերայ անկայուն ալեւաց ,  
մահկաձև նաւահանդիխսոն , ամենազարդ տաճարք  
կրօնից և իննջոյից , և որ այն ևս : Զինչն ևս առացից  
զինութեանց մերոցն յօտար աշխարհս . զեկեղե-  
ցեացն որ 'ի բիւրանդիխոն , 'ի Վենետիկ , 'ի քա-  
ղաքն սուրբք , 'ի Հնդիկն և 'ի Տաւրիա . զբրդանցն  
հեղինեայ որյ Երուասպէմ , զնորոգութենէն Պալ-  
մրայ 'ի ձեռան Պատրիայ հայոյ , և որ զարդիս զկա-  
րաւանատանց և զուկայից , զվարժարանաց և զա-  
րուանաց :

Բայց եթէ համօրէն զմեծութիւն և զյօժարու-  
թիւն հանձարոյ ազգիս բովանդակել պէտք իցեն ,  
քննեսցուք զայն արուեստ՝ որ մոնուցանէ զաշխարհ  
գրգելով , զվաճառականութիւն ասեմ , զառ 'ի  
յօտարաց ևս վկայեալ բնիկ ոդի հայոցս . յորմէ 'ի  
գէալ և արժան է անանջատ համարել և զտարաշ-  
խարհիկ ուղևորութեանցն յաջողակութիւն : Եւ  
ահա անգստին 'ի ցրուելց անտի մարդկութեան  
յերես երկրի՝ սովորութիւն արարին որդիք հայկայ  
բերովք հայրենի աշխարհին յայց ելանել օտա-  
րաց . յորմէ և այլոց ազգաց ծանօթս առեալ  
յզնիսն՝ գիմեին 'ի հայս ըստ զանազան դիպաց  
պահանջման , որպէս Շենազնն Մամբուն , պա-  
զեստինացին . Քանանիդաս , ասորիքն Սենեքերի-  
մեանք , հնդիկն . Դեմետր և Գիտանէ , կովա-

սային հասուածք բազում անդամ , այլովքն հան-  
դերձ : Իսկ Հայք յանցիշտակ ժամանակաց զյու-  
նականաւն և զկասպիականաւն պատեալ էին ծո-  
վուք՝ ըստ խորենացւոյն , և 'ի Պոնտոս նաւեալ՝  
որպէս Սարաբոն ցուցանէ . իսկ Տիւրոսի Եզեկիէլ  
յուշ առնէ զվաճառականաւնն որ «Ի տանէն թոր-  
» գոմայ ձիովք և հեծելովք և ջորւովք լցին զվա-  
» ճառաւ քո » : Երոդոսոս նկարագրէ զգեցիք  
նաւարկութիւն հայոց ընդ Եփրատ 'ի Բարելոն ,  
և զգարձն ընդ ցամաքք իշոց բառնալով զկազմած  
նաւակացն , և օշարակ արմաւոյ բերել ասէ անդր ,  
զոր կամ յԱրաբիոյ և յԵգիպտասոէ ածէին , կամ  
յԱրաբացւոց առնոււին , կամ թէ 'ի հայաստան  
զըմպէլին գործէին : Դարձեալ և ընդ Տիգրիս գետ  
'ի նոյն քաղաք բրդս տանել պատմէ Դիոդոր . ընդ  
որ և քարինս ածէին 'ի պէտա շինութեան Բարե-  
լոնի , որպէս իմաստափրէ 'ի հնախօսիցն ոմն : ՅԱ-  
սորիս , 'ի Պարս , 'ի Մարս , յԵգիպտոս , 'ի Պա-  
զեստին , 'ի Հնդիկն և 'ի Խորս իսկ Ափրիկոյ (զի  
ընդ ասպատակս հերակլի և զհայս յիշէ Սալլուս-  
տիոս) , 'ի վաղնջուց ժամանակաց երթևեկս առ-  
նէին հայք :

Գիտացին մերքն և գաշնակից սատարութեամբ  
ազգաց օտարաց բարդաւած կացուցանել զկեն-  
ցազօգուտա արուեստն , և ընկերացան ընդ վաճա-  
ռաշահ ազգինս . բան մարդարէին որ առ Տիւրա-  
ցիս , և հայկական անուանիք յարձանագրութիւնս  
փիւնիկեցիս՝ ցուցանէն զնոսա դաշնակիցս մերոցն  
եղեալ : Զնոյն և ընդ Արաբացիս արարին . զի 'ի  
վաղնջուց ժամանակս հզօր էր ազգդ այդ 'ի վա-  
ճառականութել ընդ ծովէ և ընդ ցամաքք . դարձեալ  
և ընդ Հրէից յառաջ քան զաւուրս Շամբաթայ  
և Հրաշէի Շուի սկիզն եղեալ ընկերութեանն :  
Զմիաբանական ձեռնուութիւն ազգացս քաջ  
հաստատեաց լայնածաւաւլ հանձար միջնոյն Տիգ-  
րանայ , գերութիւնն մեծ ածեալ 'ի հայս 'ի Հրէից ,  
յԱրաբացւոց և 'ի Յունաց , և օժանդակութեամբ  
նոցա ծաւալեալ զվաճառականութիւն ազգին  
ցոր վայր ոչ ժամանեցին աշխարհակալ զէնիք իւր :  
Բազում գոփիսութեանց տարեալ հինաւուրցն

հայաստան , և ոչ հովացաւ յեռ անդն այսր ախոր-  
ժակի . քանզի յամենայն ժամանակս և 'ի գարս  
գանհեմք զվաճառականս մեր 'ի տար աշխարհս  
խաղացեալ . գնային նորա ընդ անապատս Ասորւց  
'ի քննալն Պալմիրա 'գաշնակիցք գոլով Զենորիայ  
դշխոյի , և յարշաւանս Հոռմայեցւոց թագուցա-  
նէին զգանձն իւրեանց 'ի խալս Եփրատայ : Ի  
Հնդիկս անընդհատ երթևեկք էին նոցա . զի և 'ի  
չորրորդումն գարու յիշէ ոմն պաամագիր յօյն՝  
տօնավաճառս լինել 'ի Բագնէ (ՍերուՃ) քաղաք  
Միջագետաց 'զվաճառացն բերելոց 'ի Հնդկաց և  
'ի Սերաց՝ որ առ երի կայ Պարթեաց աշխարհին .  
պատմէն և մերքն վլմբատայ տիեզերակալէ , զի  
կանթեղունս բիւրեղեայս ետ բերել անտի : Եւ 'ի  
բառնալ արքայական հարստութեան յերկրէն  
հայոց , վաճառականութեանն շուք անադօս  
մնայր . յամենայն վաճառական քաղաքս գեգե-  
րէին վաճառականիք հայոց ընդ արևելեան կայսե-  
րօք . և յորժամ 'ի Կիւլիկիա միւսանդամիմբեցաւ  
վայելութիւնն ազգին , բարեւացապարտ թագաւո-  
րահայրն կոստանդին՝ ընդ առաջինսն 'ի բարե-  
զարդութեանց կարգէր՝ և զահաստան քաղաքաց  
կառուցս 'ի ծովեղերեայս աշխարհին . որպէս զի

առանց ինչ աւելաբանութեան կարող եմք ասել,  
թէ Հայք միայն 'ի սկզբանէ ընկերութեանց աշ-  
խարհի մինչեւ ցարդ կացին ականաւոր վաճառա-  
կանք արևելից:

Բայց «Ոչ միայն արևելետն վաճառականութե  
» տեարք եղեն Հայք, ասէ Մարթինիէ, այլ մասն  
» մեծ ունին և յեւրոպեան քաղաքս » : Առ այս  
շնորհապարտ համարին զանձին՝ Ըահաբասայ, որ  
անբաւ աղիտիւք լցեալ զհայաստան, 'ի ձեռն Հայ-  
ոց հոգացաւ բարգաւաճել զաշնարհն վաճառա-  
կանութեամբ, 'ի նոսա յանձնեալ զմետաքս և ըզ-  
կերպաս ծաւալել յԵւրոպ: Յառաջնմէ իսկ դա-  
շին կուեալ էր Ռուգինեանց ընդ. Վենետիկոյ և  
Գենուայ, և 'ի վաղուց ևս 'ի տասներորդ դարէ  
հետէ կարծեմծանօթացեալ մերոցն ընդ. Վենետ-  
իկոյն 'ի Տրապիզոն, յորժամ ընդ Յունաց անդր  
գնային: Խաչակիրք կրկին ծանուցին Եւրոպայ  
զյաղողութիւն ազդիս յայն արուեստ. այլ յոր-  
ժամ տէրութիւն 'ի սպառ բարձաւ 'ի նմանէ, և  
Ըահաբաս ձեռնուտու եղել, ազատագոյն ևս յա-  
ռաջ խաղացին Հայք յաշխարհս բարգաւաճս, և  
վաճառականօք մերովք լցան Հուոմէ Փլորենտիա,  
Ռուտինէ, Շիմինի, Հռաւեննա, Անքոնա, Պիսա,  
Վենետիկ և ամենայն Խտալիա: Լէհատուան ասպըն-  
ջական եղեալ գաղթականաց մերոց՝ մեծ աքայլ  
յառաջ ընթացաւ յարուեստս և 'ի քաղաքական  
բարեզարդութիւնս. թէրակղզին Ազախու ժողո-  
վեալ զնոսին՝ կրկին արծարծեցաւ 'ի բորբոքն յայն  
զոր արկեալ էր Գենուացւոց. Թաթարք՝ նոր Ճա-  
նապարհս օգտից ուսան 'ի վլուարնեցեացն Անուոյ.  
հիւսիսայինն Գերմանիա Ճոխանայր յառատու-  
թենէ Հայոցն եկելոց 'ի տօնավաճառս իւր, և նո-  
քքը կրթէր 'ի վաճառականութեան արուեստին,  
ասէ ոմն մատենացիր. իսկ հարաւայինն գործակ-  
ցութեամբ մերոցն ստացաւ զմեծ փարթամութի:  
Ռուսաստան 'ի ձեռն Հայոց ծաղկէր, Հոլանտա  
Հայոց գտանէր իւր մտէրիմ գործակից. թէրակղ-  
զին իրերնեան ձեռն տուեալ 'ի Հայն՝ տանէր զնա  
'ի խորագոյն սահմանս ամերիկեան և ասիական  
աշխարհաց. Գաղղիա 'ի հեռուստ մեծարանս ըն-  
ծայէր և հրաւեր կարդայր նոցա, փութայր և Ռի-  
շլիէ վանս ընդարձակս կազմել վասն բազմութե  
Հայոց: Եւ գու ինքնին նորդ կարգեգոն, ծովիշ-  
խանդ. Անդղիա, պարտական ես Հայոց և վասն  
վաճառականացն որ 'ի Հոնատոն, « Յորոց ընդ  
» խումբս բաղում անդամ բաղիսիմ, ասէ Խտիսըն,  
» 'ի շընէլ իսրում 'ի հրապարակին վաճառակա-  
» նաց », և վասն դիւրագոյն օրինակի հաշուեգիր  
տօմարին նոցա, և յաւետ վասն հնդկային վաճա-  
ռականութեանդ. զի ընդ. հետս Հայոց ուսար կո-  
խել զբաղում կողմանս Ճոխահարուստ աշխարհին:  
« Այնպէս իմն 'ի կողմանս յայսոսիկ հաստատեալ  
» է Հայոց զվաճառականութիւն իւրեանց, ասէ  
» Պիշնիկ, զի խոչ մեծ լիցի Եւրոպացւոց մուտ  
» գտանելոյ անդր, և անդամ Անդղիացւոց՝ որոց  
» 'ի Փեկու միայն է կալուած փոքրիկ » : Եւ յի-  
րաւի. զի մինչ սոքա հազիւ մուրացածոյ գործա-  
տունս ինչ կանգնէին յափունս Հնդկաց, Հայք 'ի  
Սիսամ. 'ի Մողոլ, 'ի Պենկալա, 'ի Յաւա, 'ի Կու-

զիս Փիլիպպեան, 'ի Մանիլիա, 'ի Պորնէով, 'ի  
Սումատրա, 'ի Սինկափուր, և 'ի շրջասփիւսո Ռէ-  
կիանու ընդ. հոյակապ եկեղեցեաց կառուցեալ  
ունէին զթանգարանս Ճոխութեան: Եւ ոչ զիս  
առեալ անդամոր, յառաջ անցանէին 'ի սահմանս  
Չինաց և 'ի սպառուածս Ռուսաստան աշխարհի,  
յԱմֆաերիսան, 'ի Մողուոք և 'ի Սիպէրիա, մինչ  
գեր, 'ի նմին ժամանակի և կարաւանկ նոցա հեր-  
ձեալ անցանէին ընդ. աւազակոյան ծով Սահրայ:  
Եւ մինչև ցայսօր ոչ միայն յամենայն կողմանս աշ-  
խարհի սփուեալ են Հայք, այլ են բազում տեղիք՝  
յորս Անդղիացիք և Հայք միայն մասնէն: Նշ-  
բարէ, քանի խոտիր է 'ի նոսա... Անդղիացին սան-  
ձակալ ալէաց Ռվիփանու՝ զժուիս և գհողմն լծեալ  
ցամաքաթէն և ծովաշու կարացն՝ ակաղձուն գո-  
գովք սլանայ յորուստ երկրի. իսկ Հայն անդք և  
անստերունէ իբրև հետի և անթաց ընթացիք սահ-  
մանս վաճառականութեան իւրոյ գործէ զնոյն  
սահմանս Անդղիացւոց, մանաւանդ թէ զծակս  
աշխարհի:

Սակայն արժան և 'ի գէպ էր Հայոց առաջն  
վաճառականս աշխարհի լինել, որպէս կոչն և  
յԵւրոպացւոց շատք զնոսա. զի է նոցա ոգի սեպ-  
հական, բերումն բնատուր և անընդդիմակաց,  
յոյր սակս սացա ոմն. « Նովատ յաջողեցին Հայք  
ընդ ամենայն տէրութեամբ » : Է նոցա անխոնջ  
զօրութիւն 'ի տարաշխարհիկ ընթացս, երագա-  
միտ տեսութիւն 'ի կնճիռս հաշուոց, վսեմութիւն  
և ազնուութիւն բարուց՝ որով գէն գհամարուես-  
տիք, անխարդախս հաւատարմութիւն՝ վկայեալ  
յամենեցուն, և 'ի վերայ ամենայնի՝ ազգակցութիւ-  
նընդ. արևելեայս՝ որով սիրելի են նոցա, և համա-  
կրօնութիւն՝ որով յօժարագոյնս ընտելանան ընդ  
արևմտեայս :

(Աւարգն յառաջնիւոյ: )

## ԲԱՐՈՅՑԱԿԱՆ

Սպանիայուոյ առանիւր:

Գէշ կեանկը անցրնովը՝ կեանկը վախով կ'անցնէ:  
Բարիք կ'ուզես նէ փնտուէ, բայց չարիք կրելու  
ալ սպասէ :

Ապէրախտ չեղող մարդուն ուզէլէն առաջնուուր:  
Լաւ է կոյր ըլլա՝ քան թէ աղէկը գէշ տեսնալ:  
Ան մարդն է հարուստ որ աղէկ բարեկամներ  
ունի :

Ծիտակ Ճամբէն քալէ, չես իյնար. իյնաս ալնէ  
շուտ կ'ելես :

Արդար վաստակն ալ կրնայ կորսուիլ. բայց մ-  
նիրաւ վաստակը ինքն ալ կը կորսուի, զինքը պա-  
հողն ալ կը կորսունցընէ :

Գէշ իօսքին բայցած վէրքը աւելի իորունկ է  
քան թէ սուրդանակինը .